մե՞նք յաւիտենական խղճուկ ճամբորդներ։ Ու մեր կեանքն ընթանում է միշտ մեզնից ծածուկ արահետներով, որ կարծում ենք թէ մենք ենք դնել։

Քանի՞ քանի անգամ եմ տեսել այս Piazza-ն ու միշտ նոր պատրուակով, բայց իրօք հոգուս խորքերում շարունակ հնչուել է մի հատիկ մոգական բառ — Armenis!... Ամբոխի եռուզեռ, կառքերի դղրդիւն, լրագրավաճառների կանչուրտուք, փոշի, հրմըշտուք, ու ես մենակ այս հրապարակի կեդրոնում հայեացքս չեչտ՝ դէպի այս կախարդիչ սիւնը։

Ի՞նչ դիւթանք, ի՞նչ դողտրիկ երաղ, ի՞նչ փառք, որ դարերի խորքից է բարձրանում այս ժպտուն երկնքի տակ, մարդկային այս ժխորի մէջ։ Մտերիմ հարազատի պատկեր, որ յանկարծ ցցւում է առջեւդ. պառաւած մօրդ քաղցրիկ օրօր, որ այս անգամ հնչւում է որպէս երկնային մեղեդի։ Հոգիս հնազանդ այդ ձայնին՝ բնաւեր թռչունի պէս կծկւում է պաղ մարմարին՝ հին յուշերի ջերմութիւնով տաքանալու համար։ Իմ հայրենի օճաղի մոխիրներն եմ խառնում. կարդում եմ նորէն ու նորէն։

Armenia!... իմ անո՛ւշ, ի՛մ անմահ հայրենիք, որ մի օր Հռոմի ահեղ զօրութեան հետ չափուեցիր։ Եւ ո՞ւմ դէմ չճակատեցիր. ո՞ր աշխարհակալի, ո՞ր բռնաւորի դէմ չծառացար քո արդար, յաւերժապէս պայծառ խղճմտանքի եւ քո անբիծ բաղուկների ազատութեան համար։ Armenia... իմ դըժբախտ հայրենիք, մղձաւանջ է մեր ներկան այնքան փառքերից յետոյ, ամօթանք է մեզ ապրող սերունդներիս...

Այս ո՞ւր հասանք։ Հռոմի հետ զարկուող հայը բարբարոս Թուրքի երեսից արար աշխարհում գլուխը դնելու տեղ չունի։

Armenia, Armenia «ահեղ եւ երեւելի»*) հսկաներից մնացած Armenia երեսուն դարերի միջից հնչուող դիւթական երաժշտութիւն...

* * *

Շուրջս հեւքոտ կեանքը մեծ քաղաքի եռում է ու տնքում ցաւագարի պէս։ Իր երկէն ու այսօրը իրար խառնած այս ժողովուրդը ինչ որ ջլախտաւոր դող ունի, որ ցնցում է նրան երազուն ու յանդուգն իղձերով։ Հայրենի աւերակների ճայնին հնազանդ դէպի արեւելք են դարձած շատ հայեացքներ։ Անցորդները ողջունում են իրար Կատոնների, Պոմպէոսների եւ Կեսարների պէս՝ աջ բազուկը դէպի հեռաւոր հորիզոնը տարածելով։ Թիկունքիս Consulta-ն է՝ արտաքին գործոց նախարարութիւնը, ուր երկաթէ մկաններով մի մարդ է նստած՝ հարուստ ու հզօր ծնօտներով ու բրոնզէ կամքով, որ արեւմուտքին բռունցք է ցոյց տալիս, արեւելքին ժպտում... Գիտեմ, Անդորայից դիւական գործակալներ են հասած, ողջ Առաջաւոր Արեւելքը պղծելուց, աւերելուց ու արիւնոտելուց յետոյ շտապել են նոր Հռոմ, հին հռոմէական բազուկի այս ողջոյնի իմաստը հասկանալու...

Միտքս դարձել է յորձանուտ մի դեռ, որ «դարիւ, դարիւ» զարկուելով իր ծփանքների մէջ տանում է այնքա՞ն փառքեր ու այնքա՞ն փլուզումներ։ Ցաղթական վերելք ու աղէտաւոր անկումն, ռազմական խոյանք մրրկաշունչ երիվարներով եւ պատմութեան կսկիծ. նոր կորովի եւ նոր կեանքի փթթումն թշնամիների դերեզմանների վրայ եւ բարբարոս խաժամուժների նոր աւերած... Եւ ազգերը շարաններով անցնում են աչքիս առաջից մրրկով տեղահան եղած անտառների նման եւ սլանում են մեր աշխարհի վրայով՝ մերթ խորտակուած, մեր բանակների հարուածների տակ եւ մերթ յաղթական մեր թիկունքի վրայ քալելիս։ Աշխարհում չկայ աւելի ողբերգօրէն մեծ եւ խորութեամբ ահաւոր, ալեկոծումներով շշմեցուցիչ եւ ցեղային կամքի ջլապինդ դալարումներով՝ հարուստ ու երկաթէ կորովով դարբնուած մի ապշեցուցիչ պատմութիւն քան մերն է։

Հայոց աշխարհի կեանքի րիթմը չափն է տիեզերական պատմութեան։ Ազգերի ամբարբշտութիւնը ու նրանց շարժուձեւի ներքին արժէքը մեր աշխարհում ի յայտ եկաւ։

Անդորայի գործակալներ են հասած Հռոմ...

Մեր ոսկիամայր Անահիտի ոսկէ արձանը փշրող հռոմայեցի զինուորը ըստ աւանդու-

*) Խորենացի։